

ՀՈԿՏԵՄԲԵՐ OCTOBER

1

Հինգշաբթի
Thursday

Ե M	Ե T	Չ W	Հ T	ՈՒ F	Շ S	Կ S
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	



19-րդ դարի կեսին Գյումրիում ապրող էթնիկ համայնքներն ունեին իրենց թաղամասերը՝ «Բոշի մայլա» (գնչուների թաղ), «Սլոբոդկա» (ռուսների թաղ), «Ֆրանկների մայլա» (կաթոլիկների թաղ): Այս անվանումները խոսում էին այնտեղ բնակվողների ազգության, դավանանքի կամ զբաղմունքի մասին: Այս թաղերից շատերը գոյություն ունեն մինչև օրս:

In the mid-19th century, the ethnic communities living in Gyumri had their own neighborhoods: "Boshi Mayla" (Gypsy neighborhood), "Slobodka" (Russian neighborhood), "Frankneri Mayla" (Catholic neighborhood). These names reflected the ethnicity, religion, or occupation of the people living there. Many of these neighborhoods exist to this day.

ՀՈԿՏԵՄԲԵՐ
OCTOBER

2

Ուրբաթ
Friday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	

12-12-րդ դարերում գնչուների մի ծյուղ հիմնավորվեց Հայկական լեռնաշխարհում և, քրիստոնեությունն ընդունելով հայկական մեկնությամբ, կազմեց հայ գնչուների էթնիկ խումբը: 19-րդ դարից ի վեր նրանց կոչում են բոշա՝ թափառական: Բոշաները 1828-ին վերաբնակեցվեցին Ալեքսանդրապոլում: Այսօր Գյումրիում բոշաներն ապրում են Բոշի մայլա թաղում:

In the 11th-12th centuries, a branch of the Gypsies settled in the Armenian Highlands and, adopting Christianity with an Armenian interpretation, formed the ethnic group of the Armenian Gypsies. Since the 19th century, they have been called Boshas, meaning wanderers. The Boshas were resettled in Alexandrapol in 1828. Today, they live in the Boshi Mayla district of Gyumri.



Բոշա, 19-րդ դար
Bosha, 19th century

ՀՈԿՏԵՄԲԵՐ OCTOBER

3

Շաբաթ
Saturday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	



«Սլոբոդկան» հարուստ ճարտարապետական ժառանգություն ունեցող թաղամաս է: 1804-1805 թթ., երբ սկսվեց Առաջին ռուս-պարսկական պատերազմը, ռուսական զորքերը մտան Շիրակ, ստեղծեցին իրենց փոքրիկ թաղամասը, որն անվանեցին «Սլոբոդա»: Ժամանակի ընթացքում «Սլոբոդան» վերածվեց «Սլոբոդկայի»:

"Slobodka" is a district with a rich architectural heritage. In 1804–1805, when the First Russo-Persian War began, Russian troops entered Shirak and created their own small district, which they called "Sloboda." Over time, "Sloboda" turned into "Slobodka."

ՀՈԿՏԵՄԲԵՐ
OCTOBER

4

Կիրակի
Sunday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	



1837-ի հոկտեմբերի 4-ին ամրոցի տարածքում Նիկոլայ 1-ին ցարի ներկայությամբ դրվեց Սուրբ Նահատակ կայսրուհի Ալեքսանդրայի եկեղեցու հիմքը: Եկեղեցին նախատեսված էր 800 զինվորականի համար: Նիկոլայ 1-ինը եկեղեցուն նվիրաբերեց Կառլ Բրյուլլովի ստեղծած սրբապատկերը: 1918-ի մայիսի 25-ին եկեղեցին ավերվեց և վերակառուցվեց միայն 2009-ին: Այսօր այնտեղ պահվում են ՌԴ նախագահի, Համայն Ռուսիո պատրիարքի և Ամենայն Հայոց կաթողիկոսի նվիրաբերած սրբապատկերները:

On October 4, 1837, in the presence of Tsar Nicholas I, the foundation of the Church of the Holy Martyr Empress Alexandra was laid on the territory of the fortress. The church was intended for 800 soldiers. Nicholas I donated the icon created by Karl Bryullov to the church. On May 25, 1918, the church was destroyed and was rebuilt only in 2009. Today, icons donated by the President of the Russian Federation, the Patriarch of All Russia and the Catholicos of All Armenians are kept there.

2026

ՀՈԿՏԵՄԲԵՐ OCTOBER

5

Երկուշաբթի
Monday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
--------	--------	--------	--------	---------	--------	--------

1 2 3 4

5 6 7 8 9 10 11

12 13 14 15 16 17 18

19 20 21 22 23 24 25

26 27 28 29 30 31



«Լենինական» լիմուզինն իր ձեռքով հավաքել է քաղաքի բնակիչ Սկրտիչ Պողոսյանը: Մեքենան 1980-ականներին հայտնի դարձավ ամբողջ Միությանում: «Լենինականը» հավաքված է «Վոլգա» և խորհրդային այլ մեքենաների հիմքի վրա, մնացածը ստեղծել է վարպետը: «Լենինական» լիմուզինը պահպանվել է մինչև օրս և գերազանց վիճակում է:

The "Leninakan" limousine was hand-assembled by the city's resident Mkrtych Poghosyan. In the 1980s, the car gained fame throughout the Soviet Union. Built on the chassis of a "Volga" and other Soviet vehicles, the rest of the limousine was entirely crafted by Poghosyan himself. Remarkably, the "Leninakan" has been preserved in excellent condition to this day.

2026

ՀՈԿՏԵՄԲԵՐ OCTOBER

6

Երեքշաբթի
Tuesday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	

Առաջին ստարտափ ընկերություններից մեկը՝ «Թվային մետաքսե ծանապարհ» հայ-չինական կենտրոնը

One of the first startups, the Armenian-Chinese Center for the Digital Silk Road



Digital Silk Road

Քաղաքն ապրում է ապագայով: Գյումրու արվարձանը կարող է դառնալ էկոթաղամաս: Այս 21 հա-ի վրա կլինեն կանաչ տարածքներ և ՏՏ ստարտափ ընկերությունների գոտիներ:

The city is living with an eye on the future. The outskirts of Gyumri could become an eco-district. On these 21 hectares, there will be green spaces and zones for IT startup companies.

ՀՈԿՏԵՄԲԵՐ
OCTOBER

7

Չորեքշաբթի
Wednesday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	



idea.am

Գյումրու ապագայի մեկ այլ նախագիծ է «Բարեկամության այգին»: Այն կլինի շրջանի ամենագիլ այգին: Մշակվելու է առաջադեմ տեխնոլոգիաներով, հաշվի են առնվելու քաղաքաշինության նորագույն միտումները:

Another project shaping the future of Gyumri is the “Friendship Park.” Set to become the region’s premier park, it will be designed using cutting-edge technologies and aligned with the latest trends in urban development.

2026

ՀՈԿՏԵՄԲԵՐ
OCTOBER

8

Յինգշաբթի
Thursday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	



gyumri.info

Գյումրիում «Ամերիկյան թաղամաս» է կառուցվելու ամերիկյան արվարձանների օրինակով: Նախագիծն իրականացվում է «Էկոքաղաքների շինարարություն» ծրագրով: Շենքերը կկառուցվեն շատ արագ, կկրեն SIP վահանակներ, կունենան հաստատուն ամրություն, բարձր էներգաարդյունավետություն:

Gyumri will soon feature an "American District," inspired by the design of U.S. suburbs. Developed under the "Eco-Cities Construction" program, the project will use SIP panels for rapid construction. The buildings will be durable, energy-efficient, and built to last.

ՀՈԿՏԵՄԲԵՐ
OCTOBER

9

Ուրբաթ
Friday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	



Ավստրիացիները Գյումրու «Ավստրիական թաղամասը» կառուցել են 1988-ի երկրաշարժից անմիջապես հետո: Միհարկանի տնակները պատրաստված են փրփրապլաստից: Այն ժամանակ թաղամասը հրաշք էին համարում, և մարդիկ մյուս թաղամասերից հավաքվում էին, որ տեսնեն ապակեպլաստե պատուհանները, Bosch կենցաղային տեխնիկան՝ տներում, կղմինդրե տանիքները և ապակե դռները:

The Austrians built the "Austrian Quarter" in Gyumri immediately after the 1988 earthquake. The one-story houses, constructed from foam concrete, were considered a marvel at the time. People from other neighborhoods would come to see the fiberglass windows, Bosch appliances, tiled roofs, and glass doors.

ՀՈԿՏԵՄԲԵՐ
OCTOBER

10

Շաբաթ
Saturday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	



Վերականգնվող Գյումրին

Gyumri under reconstruction

ՀՈԿՏԵՄԲԵՐ
OCTOBER

11

Կիրակի
Sunday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	



Քաղաքի եկեղեցիների մեծ մասը կառուցել են համքարությունները, որոնք ակտիվորեն մասնակցել են քաղաքի մշակութային և հոգևոր բոլոր ծրագրերին: Համքարությունների արհեստավորները միշտ անվճար են աշխատել, քանի որ այդ աշխատանքը սրբազան պարտականություն են համարել:

Most of the city’s churches were built by the “hamkarars”, who actively participated in all the city’s cultural and spiritual programs. “Hamkarars” craftsmen always worked for free, as they considered this work a sacred duty.

2026

ՀՈԿՏԵՄԲԵՐ
OCTOBER

12

Երկուշաբթի
Monday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	



Սանկտ Պետերբուրգի կոնսերվատորիայի ղեկավար, կոմպոզիտոր Ա. Գլազունովն Ալեքսանդր Հակոբյանին թախանձագին առաջարկում էր կոնսերվատորիա ընդունվել, սակայն նա ընտրեց գիտությունը: Ծնվել է 1890-ին, Ալեքսանդրապոլում: Ավարտել է Պետրոգրադի պոլիտեխնիկական ինստիտուտը, որտեղ ուսումնասիրում էր թերմոդինամիկա և մեխանիկա: Հակոբյանը երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի հիմնադիրներից է: Միաժամանակ ղեկավարելով երեք ամբիոն՝ նա դարձել է Հայկական ԽՍՀ առաջին ակադեմիկոսներից մեկը:

The rector of the St. Petersburg Conservatory, composer A. Glazunov, personally urged Alexander Hakobyan to enroll in the conservatory, but he chose the path of science instead. Born in Alexandropol, Hakobyan graduated from the Petrograd Polytechnic Institute, where he studied thermodynamics and mechanics. He became one of the founders of the Yerevan Polytechnic Institute and, while heading three departments simultaneously, earned recognition as one of the first academicians of the Armenian SSR.

ՀՈԿՏԵՄԲԵՐ
OCTOBER

13

Երեքշաբթի
Tuesday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	



«Գյումրվա հողը հայ մշակույթի օրրանն է»,– ասում է դիրիժոր Լորիս Ճգնավորյանը: Երկրաշարժից հետո հավաքված միջոցներով Մաեստրոն քաղաքում հիմնեց Արվեստի ակադեմիա, որտեղ գործում են Կոնսերվատորիայի, Թատրոնի և կինոյի ինստիտուտի, Գեղարվեստի ակադեմիայի մասնաճյուղերը: Լորիս Ճգնավորյանը Գյումրու պատվավոր քաղաքացի է:

“The land of Gyumri is the cradle of Armenian culture,” said conductor Loris Chghnavoryan. With the funds collected after the earthquake, the Maestro founded the Academy of Arts in the city, where the branches of the Conservatory, the Institute of Theater and Cinema, and the Academy of Fine Arts operate. Loris Chghnavoryan is an honorary citizen of Gyumri.

ՀՈԿՏԵՄԲԵՐ
OCTOBER

14

Չորեքշաբթի
Wednesday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	



Քեոսայանի «Տղամարդիկ» ֆիլմի գլխավոր հերոսների մի մասին մարմնավորել են ոչ պրոֆեսիոնալ դերակատարներ: Օրինակ՝ Արամի դերը կատարել է կրճակակար-ծնավորող Ավետիք Գևորգյանը: Արամի ընկեր Սաքոյի դերը մարմնավորող Արմեն Այվազյանը շինարար էր: Գյուլի գեղեցկուհի Անուշի դերում նկարահանվել է հանրախանութի վաճառող Կարինե Խանդանյանը:

Some of the key roles in Keosayan’s film “The Men” were played by non-professional actors. For instance, the role of Aram was portrayed by Avetik Gevorgyan, a shoemaker and designer. Armen Ayvazyan, a builder, played Aram’s friend Sako, while Anush was brought to life by Karine Khandanyan, a store saleswoman.



2026

ՀՈԿՏԵՄԲԵՐ
OCTOBER

15

Հինգշաբթի
Thursday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	



Քեոսայանի «Տղամարդիկ» ֆիլմում հնչում է «Քամին զանա» ժողովրդական երգը: Ֆիլմում այն կատարում է Զիգարխանյանի կերտած հերոսը՝ ատամնաբույժ Ղազարյանը: Այս երգը մեծ ժողովրդականություն վայելեց, սակայն քչերը գիտեն, որ Զիգարխանյանի փոխարեն երգել է Քեոսայանը, թեև հայերեն գրեթե չգիտեր, որովհետև ապրել և մեծացել էր Սիբիրում:

Keosayan's film "The Men" features the folk song "Kamin Zana." In the film, it was performed by Dzhigarkhanyan's character, dentist Ghazaryan. This song became very popular, but few people know that Keosayan sang it instead of Dzhigarkhanyan, even though he barely knew Armenian, because he had lived and grown up in Siberia.

ՀՈԿՏԵՄԲԵՐ
OCTOBER

16

Ուրբաթ
Friday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	

Դրվագ «Սուրամի ամրոցի լեգենդը» ֆիլմից
An episode from the movie "The Legend of Suram Fortress"



Մեծ ռեժիսոր Սերգեյ Փարաջանովը, որը հայտնի է անսովոր և վառ տեսողական լուծումներով, հաճախ իր ուշադրությունը սևեռում էր Հայաստանի քիչ հայտնի անկյունների վրա: Օրինակ՝ «Սուրամի ամրոցի լեգենդը» ֆիլմի մի քանի տեսարաններ նկարահանել է Շիրակի մարզի Ամասիա գյուղում, Շիրակի լեռնաշղթայի լեռներում:

The renowned director Sergey Parajanov, celebrated for his strikingly original visual style, often drew inspiration from Armenia's lesser-known corners. For instance, he filmed several scenes of "The Legend of Suram Fortress" in the village of Amasia, nestled in the Shirak Mountains of Shirak Province.

ՀՈԿՏԵՄԲԵՐ
OCTOBER

17

Հարաթ
Saturday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	

Կրասարի եռաթիղջ կամուրջը: Ալիշանի «Շիրակ» գրքում նշվում է, որ 1873-ին այն կառուցել է «Կյումրեթցի» Ստեփանոս Մեսանիկյանը:

The Krasar three-span bridge. Alishan's book "Shirak" mentions that it was built in 1873 by Stepanos Ananikyants, a "Kyumret" resident.



arm.sputniknews.ru

Շիրակում կամուրջներ կառուցող վարպետները խոստն ավանդույթ ունեին: Նրանք առաջինն էին անցնում իրենց կառուցած կամրջի վրայով, որի տակ կանգնում էր վարպետի ընտանիքը:

The master builders of Shirak had a striking tradition: they would be the first to cross any bridge they constructed, while their families stood under it.

ՀՈԿՏԵՄԲԵՐ
OCTOBER

18

Կիրակի
Sunday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	



Գյումրուց մոտ 40 կմ հեռավորությամբ գտնվող Հառիժավանքը կառուցված է ժայռի վրա։ Պահպանվել է մի հետաքրքրաշարժ ավանդազրույց։ Մի արքայադուստր, փախչելով սելջուկներից, թաքնվել է վանքի մատուռում։ Երբ նրան հետապնդողները փորձել են մատուռ մտնել, հրաշք է կատարվել։ Ժայռը երկու մասի է բաժանվել, և մատուռը մնացել է կոտրված բեկորի վրա՝ փրկելով աղջկան։ Իրականում ձգնարանը ժայռից անջատվել է միջնադարում՝ ուժեղ երկրաշարժի հետևանքով։

Located about 40 km from Gyumri, Harichavank is built on a rock. There is an interesting legend: a princess, fleeing from the Seljuks, hid in the monastery chapel. When her pursuers tried to enter the chapel, a miracle occurred. The rock split in two, and the chapel remained on the broken fragment, saving the girl. In fact, the hermitage was separated from the rock in the Middle Ages as a result of a strong earthquake.

ՀՈԿՏԵՄԲԵՐ
OCTOBER

19

Երկուշաբթի
Monday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	



Գյումրիում արհեստի գաղտնիքները հայրերից որդիներին էին փոխանցվում նրանց՝ 13 տարեկան դառնալուց հետո: Արհեստանոցներում աշակերտներն անցնում էին 1.5-10 ամիս փորձաշրջան: Աշակերտին դաստիարակում էին որպես ընտանիքի անդամի. վարպետը հարսանիքների ժամանակ հաճախ էր դառնում նորապսակների խաչքավորը, ավելի ուշ՝ նրանց երեխաների կնքահայրը: Այս ավանդույթը փոխանցվում էր սերնդեսերունդ:


In Gyumri, the secrets of the craft were passed down from fathers to sons after they turned 13. In the workshops, students underwent a probationary period of 1.5-10 months. The student was raised as a member of the family: the master often became the godfather during their weddings, and later the godfather of their children. This tradition was passed down from generation to generation.

ՀՈԿՏԵՄԲԵՐ
OCTOBER

20

Երեքշաբթի
Tuesday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	



Ալեքսանդրապոլը կարող էր դառնալ Առաջին Հանրապետության գլխավոր հանգույցը, սակայն մի պարզ պատճառով պարտվեց Էրիվանին: Ալեքսպոլում զարգացած էր մանուֆակտուրային արտադրությունը, մինչդեռ պակաս զարգացած էրիվանում արդեն զարգանում էին կապիտալիստական հարաբերություններ:

Alexandrapol could have become the main hub of the First Republic, but it lost to Erivan for a simple reason. Manufacturing production was developed in Alexandrapol, while capitalist relations were already developing in the less developed Erivan.

ՀՈԿՏԵՄԲԵՐ
OCTOBER

21

Չորեքշաբթի
Wednesday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	



Գյումրին նաև 20-րդ դարի 1970-ականների ամենաճանաչված ֆուտբոլիստի հարազատ քաղաքն է: Լևոն Իշտոյանը ԽՍՀՄ չեմպիոն և գավաթակիր էր: Նա երեք անգամ հայտնվել է Խորհրդային Միության 33 լավագույն ֆուտբոլիստների շարքում: Մեծ մասամբ նրա խաղի շնորհիվ էր, որ «Արարատը» 1973-ին և 1975-ին հաղթեց ԽՍՀՄ առաջնությունում և նվաճեց գավաթը:

Gyumri is also the hometown of the most famous football player of the 1970s of the 20th century. Levon Ishtoyan was a champion and cup winner of the USSR. He was included in the list of the 33 best football players of the Soviet Union three times. It was largely thanks to his play that Ararat won the USSR championship and the cup in 1973 and 1975.

ՀՈԿՏԵՄԲԵՐ
OCTOBER

22

Հինգշաբթի
Thursday

Ե M	Ե T	Չ W	Հ T	ՈՒ F	Շ S	Կ S
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	

Հմայակ Արծաթբանյան, «Գյուղական պար»
Hmayak Artsatbanyan, "Rural Dance"



Գյումրին ունի ավանդական պար՝ Գյումրվա տրնգին: Այն կատարում են ավանդական տարազով (չուխա)՝ դիողի և հարմոնի նվագակցությամբ: Գյումրվա տրնգին նրբագեղ պար է, որի ընթացքում դանդաղ և հպարտ շարժումներից անցում է կատարվում կտրուկին և արագին: Այցելելով Գյումրի՝ բոլորը կարող են հագնել ավանդական տարազ և պարել տեղացիների հետ:

Gyumri has its own traditional dance, Gyumri trngi. It is performed in traditional costume (chukha) to the accompaniment of dhol and hormon. Gyumri trngi is an elegant dance, during which there is a transition from slow and proud movements to sharp and fast ones. When visiting Gyumri, everyone can wear traditional costume and dance with the locals.



ՀՈԿՏԵՄԲԵՐ
OCTOBER

23

Ուրբաթ
Friday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	

Վարդգես Սուրենյանց, «Կնոջ դիմանկար»
Portrait of a Woman, Vardges Surenyants
1893

Ալեքսանդրապոլի լուսավորյալ բնակիչները մեծ հպարտությամբ էին հետևում եվրոպական նորաձևությանը: Նրանց հարստության և նորաձևությանը հետևելու մասին կարելի է դատել նրանց զարդերի, հագուստի և բնակարանների հարդարանքում կիրառվող առարկաներով:

The cultured residents of Alexandrapol took great pride in keeping up with European fashions. Their wealth and refined taste were reflected in the materials and craftsmanship of their jewelry, clothing, and household furnishings.



ՀՈԿՏԵՄԲԵՐ OCTOBER

24

Շաբաթ
Saturday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	

Ալեքսանդրապոլի աղջիկները, 19-րդ դարի վերջ-20-րդ դարի սկիզբ

The Girls of Alexandrapol, late 19th-early 20th century

Ալեքսանդրապոլի կանայք ուշադիր հետևում էին եվրոպական նորաձևությանը, որը դառնում էր նրանց կյանքի մի մասը: Սակայն ավանդական որոշ պարագաներ չկորցրին իրենց ձգողականությունը և պահպանվեցին, օրինակ՝ ձեռագործ ժանյակները և ասեղնագործ նախշակարերը, որոնցով զարդարում էին զգեստներն ու ներքնագգեստը: Դերձակի ու ներքնագգեստ ձևավորողի մասնագիտությունները դարձան խիստ արդիական:

The women of Alexandrapol closely followed European fashion, which became a part of their lives. However, some traditional accessories did not lose their appeal and were preserved, for example, the handmade lace and embroidered patterns with which they decorated their dresses and underwear. The professions of tailor and underwear designer became very modern.



ՀՈԿՏԵՄԲԵՐ
OCTOBER

25

Կիրակի
Sunday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	



Գյումրեցու ավանդական կոշիկը տրեխն էր։
Պատրաստում էին խոշոր եղջերավոր անասունի կոպիտ կաշվի մեկ կտորից՝ բոլո՛ւ կամ կաշվե ջուղերով։ Ամեն շրջանում կար ջուղերը տրեխի միջով անցկացնելու հատուկ եղանակ։ Այս կոշիկներից հագնում էր ամբողջ գյուղական բնակչությունը՝ անկախ տարիքից։ Այս ոտնամանները կենցաղից դուրս եկան 1930-ականներին։

The traditional shoe of the town resident was the trekh. It was made from a single piece of coarse cattle hide, with wool or leather straps. Each region had a special way of threading the straps through the trekh. These shoes were worn by the entire rural population, regardless of age. These footwear went out of fashion in the 1930s.

ՀՈԿՏԵՄԲԵՐ
OCTOBER

26

Երկուշաբթի
Monday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	



Գյումրիում ռոք կա: The Bambir-ը ֆոլք-ռոք երաժշտական խումբ է: Այն գոյություն ունի երկու սերնդով. երկրորդում նվագում են 1970-ականներին Գյումրիում խումբը հիմնած երաժիշտների որդիները: Խումբը 1970-ականներին կատարում էր ինքնատիպ ստեղծագործություններ, ավանդական հայկական երգեր, Կոմիտասի ժամանակակից գործիքավորումներ և միջնադարյան հայկական երաժշտություն, ուստի Խորհրդային Միությունում ճանաչվեց որպես լավագույն ռոք խմբերից մեկը:

There is rock music in Gyumri. “Bambir” is a folk-rock band that spans two generations—the second generation is composed of the sons of the original musicians who founded the band in Gyumri in the 1970s. Back then, the band performed original compositions, traditional Armenian songs, modern arrangements of Komitas, and medieval Armenian music, earning recognition as one of the best rock bands in the Soviet Union.



ՀՈԿՏԵՄԲԵՐ
OCTOBER

27

Երեքշաբթի
Tuesday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	



Ցուցանակ Գյումրու շենքերից մեկի պատին

A sign on the wall of one of the buildings in Gyumri.

ՀՈԿՏԵՄԲԵՐ
OCTOBER

28

Չորեքշաբթի
Wednesday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
--------	--------	--------	--------	---------	--------	--------

1 2 3 4

5 6 7 8 9 10 11

12 13 14 15 16 17 18

19 20 21 22 23 24 25

26 27 28 29 30 31



Յուրաքանչյուր գյումրեցի գիտի Ալբերտ Մկրտչյանի «Մեր մանկության տանգոն» ֆիլմի պատշգամբը: Այն կոչվում է «Վառեն-մարեն»: Ֆիլմում Միեր Մկրտչյանի հերոսը ցերեկն անցնում է պատշգամբի կողքով և տեսնում, որ լույսը վառած է: Սկսում է կնոջը նախատել դրա համար: Ի պատասխան՝ կինն ասում է. «Կուզեմ՝ կվառեմ, կուզեմ՝ կմարեմ»: Պատշգամբի հիմնական մասը կառուցվել է 1895 թվականին: Շենքը պատկանել է հայտնի վաճառականներ Խոյեցյաններին:

Every Gyumri resident knows the balcony from Albert Mkrtchyan's film "The Tango of Our Childhood." It is called "varem-marem." In the film, Mher Mkrtchyan's hero passes by the balcony during the day and sees that the light is on. He begins to scold his wife for it. In response, the wife replies: "I can light it or put it out, as I please." The main part of the balcony was built in 1895. The building belonged to the famous merchants Khoyetsyans.

ՀՈԿՏԵՄԲԵՐ
OCTOBER

29

Հինգշաբթի
Thursday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	



«Անբացատրելի է իմ կապը Գյումրու հետ: Սա հարգանքի տուրք է մեծ Կոմիտասին, ձոն՝ Գյումրուն, աղոթք՝ Բարձրյալին, որով խնդրում եմ ողորմած լինել Գյումրու հանդեպ, օրհնություն՝ իմ ժողովրդին, իմ հայրենիքին»: Հասմիկ Պապյան, օպերային երգչուհի, Գյումրու պատվավոր քաղաքացի

“My connection with Gyumri is inexplicable. This is a tribute to the great Komitas, an ode to Gyumri, a prayer to the Almighty, with which I ask to have mercy on Gyumri, a blessing to my people, my homeland.” Hasmik Papyan, opera singer, honorary citizen of Gyumri.

Հասմիկ Պապյանի համերգը Գյումրու
Սբ Սատվածածին (Յոթ վերք) եկեղեցում
Hasmik Papyan's concert at Gyumri's Holy
Mother of God (Seven Wounds) Church

ՀՈԿՏԵՄԲԵՐ
OCTOBER

30

Ուրբաթ
Friday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	

Պոետի ծնողները՝ Սահակ Իսահակյանը
և Ալմաստ Գլչյանը:

The poet's parents: Sahak Isahakyan
and Almast Gichyan.



nkonglr.org

Ավետիք Իսահակյանը ծնվել է 1875-ի հոկտեմբերի 30-ին, Ալեքսանդրապոլում: «Թող սա լավ լուր լինի ոչ միայն իմ ընտանիքի համար»,– որդու ծննդյան լուրը լսելով՝ ասել է Ավետիք Իսահակյանի հայրը:

Avetik Isahakyan was born on October 30, 1875 in Alexandrapol. “Let this be good news not only for my family,” said Avetik Isahakyan’s father upon hearing the news of his son’s birth.

ՀՈԿՏԵՄԲԵՐ
OCTOBER

31

Շաբաթ
Saturday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
--------	--------	--------	--------	---------	--------	--------

1 2 3 4

5 6 7 8 9 10 11

12 13 14 15 16 17 18

19 20 21 22 23 24 25

26 27 28 29 30 31



Ալեքսանդրապոլ-Լենինականի որբանոցներում (1919-1931) գործել է կոյր երեխաների համար նախատեսված նվագախումբ, որում կար 30 մանուկ: Հայ դասական երաժշտության հիմնադիրներից մեկի՝ Նիկողայոս Տիգրանյանի ղեկավարությամբ երեխաները սովորում էին նվագել դասական ստեղծագործություններ: Տիգրանյանը մանկուց կորցրել էր տեսողությունը և առաջիններից էր, որ նոտաները հարմարեցրեց կոյրերի կարիքներին: Նա համարվում է Կոյրերի միավորման հիմնադիրը Խորհրդային Հայաստանում:

An orchestra for blind children, composed of 30 young musicians, operated in the orphanages of Alexandrapol-Leninakan from 1919 to 1931. Under the guidance of Nikoghayos Tigranyan, one of the founders of Armenian classical music, the children learned to perform classical works. Blind since childhood himself, Tigranyan was among the first to adapt sheet music for the visually impaired. He is also recognized as the founder of the Union of the Blind in Soviet Armenia.